

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԴԱԿԻԹ ՈԱԶՄԻԿԻ

ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ
ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԹ. 00.01 - «Հոգեբանության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի Պետական Համալսարանում

Գիտական ղեկավար՝	հոգեբանական գիտությունների թեկնածու՝ Ռ. Վ. Աղուզումջյան
Պաշտոնական ընդդիմախոսներ	հոգեբանական գիտությունների դոկտոր՝ Վ. Ս. Կարապետյան հոգեբանական գիտությունների թեկնածու՝ Ա. Ս. Բերբերյան
Առաջատար կազմակերպություն	Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2007թ. մայիսի 31-ին, ժամը 14.00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գործող գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 375010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2007թ.-ի ապրիլի 29-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

հոգեբանական գիտությունների թեկնածու՝

Ա.Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Վերջին տարիներին ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական գրականությունում և առօրյա կյանքի տարբեր ոլորտներում հաճախ կարելի է հանդիպել «ստեղծարար տեխնոլոգիա», «ստեղծարար մոտեցում պահանջող աշխատանք», «ստեղծարար աշխատախումբ», «ստեղծարար արդյունք» արտահայտություններին: Ինչպես նաև մարդու գործունեության տարբեր ոլորտներում կազմակերպվում են ստեղծարար աշխատախմբեր, որոնց հիմնական նպատակն է գտնել տվյալ կազմակերպության համար նոր և արդյունավետ լուծումներ: Այդ աշխատանքը մեծամասամբ իրականացվում է էմպիրիկ հիմունքներով, առանց գիտական հիմնավորման, համապատասխան մասնագետների ներգրավման կամ խորհրդատվության: Դիտարկումները ցույց են տալիս, որ, բազում դեպքերում բախվում ենք անարդյունավետ միջոցառումների, քանի որ այս խնդրի գործնական լուծումը կատարվում է մակերեսային, ոչ մասնագիտական մոտեցումների կիրառմամբ: Նույն խնդիրն առկա է նաև կրթական համակարգում, ուր եթե չասենք, որ ընդհանրապես ուշադրություն չի դարձվում ստեղծարարության զարգացմանը, ապա հաստատապես կարող ենք նշել, որ կատարված ջանքերը հատվածական են, իսկ արդյունքների մշակումը՝ անհետևողական: Վերլուծությունը ցույց է տալիս, որ և՛ դպրոցական, և՛ բուհական առարկայացանկերում բացակայում են ստեղծարարության զարգացման համալիր ծրագրեր և մեթոդական ուղեցույցներ: Առավել քննադատական մոտեցման պարագայում հայտնաբերում ենք, որ մեծամասամբ «ստեղծարար աշխատախմբերում» տարվող աշխատանքները ոչ մի աղերս չունեն հոգեբանական գիտության ոլորտում ստացված տվյալներին: Այսպիսով, ստեղծված անջրպետը ստիպում է նորովի անդրադառնալ ստեղծարարության զարգացման գիտական մոտեցումներին՝ կենտրոնական օղակում դիտարկելով անձին՝ իր անհատական առանձնահատկություններով:

Ժամանակակից հետազոտություններում ստեղծարարության ուսումնասիրումը փաստացի ընթանում է իրար հետ ընդհանուր եզրեր չունեցող երեք ուղղություններով. ա) անհատական տարբերությունների ուսումնասիրման (Ջ. Գիլֆորդ, Վ. Դրուժինին, Ե. Տորրենս), բ) զարգացման (Դ. Դյուլի, Ռ. Շտերնբերգ, Տ. Բյուզեն), գ) խնդրի լուծման գործընթացի ձևականացման (Է. Գրին, Է. Կիրխլեր, Յա. Պոնոմարյով): Սակայն բացակայում է ստեղծարարության համակարգային դիտարկումը, որն էլ տվյալ ոլորտի հետազոտությունները դարձնում է փակուղային: Ստեղծարարության հիմնախնդրի համակարգային հետազոտությունը ենթադրում է նրա ուսումնասիրումը՝ որպես գործընթաց, արդյունք և որակ:

Բանաձևելով՝ նշենք, որ ստեղծարարությունը՝ ինտեգրալ հոգեկան որակ է, որը ձևավորվում է անձի մտածողական, ինտելեկտուալ, անհատական առանձնահատկությունների հենքի վրա՝ իր դրսևորումը գտնելով անձի կյանքի և կենսագործունեության տարբեր ոլորտներում:

* Այսուհետ ստեղծարարություն հայերեն տերմինը կկիրառենք որպես անգլերեն creativity և ռուսերեն креативность տերմինների փոխարեն՝ համաձայն ՀՀ Լեզվի պետական տեսչության 13.11.2006 թ. 420 որոշման:

Ստեղծարարության զարգացման, ինչպես նաև աշխատանքում սովորողների ու աշխատողների ստեղծարար մոտեցման դրսևորման կարևորությունը բազմիցս նշվել է կարևորվել է Տ. Բյուզենի, Ե. Տորրենսի, Ռ. Շտերնբերգի աշխատություններում, որոնք առավելապես անդրադարձել են ստեղծարարության հոգեձանաչման և զարգացման հիմնախնդիրներին՝ վերլուծելով և առաջարկելով այնպիսի մեթոդներ, որոնք թույլ կտան ոչ միայն հետազոտել անձի ստեղծարարությունը, այլև ուղղորդել վերջինիս զարգացումը և նպաստել նրա դրսևորմանը:

Ստեղծարարության զարգացման հիմնախնդրում գիտական միտքը միշտ կենտրոնացել է մտածողական գործընթացների ձևականացման և ինտելեկտուալ կառույցների վերակազմակերպման խնդիրների վրա՝ անտեսելով անձին: Սա էլ ստիպում է, գիտության զարգացման ժամանակակից փուլում, երբ ստեղծարար մոտեցման արդյունավետ կիրառումը կյանքի տարբեր ոլորտներում մղվում է առաջին պլան, ուսումնասիրել ստեղծարարության զարգացումը համադրելով անձնային առանձնահատկությունների դրսևորման հետ:

Հետազոտության օբյեկտը: Ստեղծարարությունը՝ որպես հոգեկանի ինտեգրալ որակ, որը ներառում է անձի մտածողական և անհատական առանձնահատկությունները:

Հետազոտության առարկան: Ստեղծարարության զարգացման ընթացքը և նրա օրինաչափությունների կապը անձնային առանձնահատկությունների, մտածողական ուժերի և որակների փոփոխությունների հետ:

Մեթոդաբանական և տեսական հիմքը: Աշխատանքի տեսական հիմքը Ռ. Զ. Շտերնբերգի ու Ե. Ժ. Տորրենսի ստեղծարարության հայեցակարգերը և Վ. Ն. Դրուժինինի «ընդհանուր ընդունակությունների» ու Մ. Ա. Խոլոդնայայի «ինտելեկտի հոգեկան կառուցվածքի» մոդելներն են, որոնք թույլ տվեցին ստեղծարարությունը դիտարկել որպես ինտեգրալ հոգեկան որակ, Ա. Օսբորնի «ուղեղային գրոհի» և Տ. Բյուզենի «մտային քարտեզավորման» տեխնիկաները, որոնց յուրահատուկ համադրությամբ կառուցվեց ստեղծարարության զարգացման համակարգը, Ա. Բինեի և Ն. Վ. Կռոգիուսի կոնցեպցիաները, որոնց հիման վրա հետազոտության երկրորդ փուլի ընտրանքը կազմվեց մասնագետ և աշակերտ շախմատիստներից: Անձի ուսումնասիրման համար հիմք ենք ընդունել Քեթթելի՝ անձի բազմագործոն ուսումնասիրման տեսությունը: Աշխատանքի մեթոդոլոգիական հիմք է ծառայել նաև ստեղծարարության զարգացման և անձնային համապատասխան առանձնահատկությունների դրսևորման համակարգային ուսումնասիրումը հավաստող գիտափորձի և թեստավորման մեթոդների միջոցով:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել ստեղծարարության զարգացման օրինաչափությունները, բացահայտել վերջինիս զարգացմանը զուգընթաց անձնային առանձնահատկությունների փոփոխությունների հիմնական ուղղություններն ու յուրահատկությունները:

Հետազոտության խնդիրները:

1. Պարզաբանել «ստեղծարարություն» հիմնահարցը և հասկացությունը, վերլուծել ստեղծարարության զարգացման հիմնական միջոցները:
2. Մշակել ստեղծարարության զարգացման ուսումնասիրման համակարգ և նախապատրաստել կիրառման ծրագիր, անցկացնել հավաստող գիտափորձ՝

համապատասխան անձնային և մտածողական առանձնահատկությունների և որակների թեստավորման և ռեթեստավորման կիրառմամբ:

3. Բացահայտել ստեղծարարության զարգացման օրինաչափությունները հավաստող գիտափորձի ընթացքում հետազոտվողների կողմից կազմված քարտեզների կառուցվածքային վերլուծության միջոցով:

4. Վերլուծել ստացված փորձարարական տվյալները, դրանց հիման վրա մշակել ստեղծարարության զարգացման մոդել, ձևակերպել համապատասխան եզրակացություններ և գիտագործնական առաջարկություններ:

Հետազոտության վարկածը: Ստեղծարարության զարգացումը ուղեկցվում է անձի հաղորդակցական և մտածողական առանձնահատկությունների դրսևորման փոփոխություններով, այն որոշակի ձևով կապված է նաև անձի մտածողական հիմնական թագմավարության ընտրության և կիրառման հետ: Ենթադրվում է նաև, որ ստեղծարարության զարգացումը ընթանում է հստակ համակարգված կառուցվածքային ճանապարհով, որի հիմնական օրինաչափություններն արտացոլվում են անձի կողմից կազմվող մտային քարտեզներում:

Հետազոտության փուլերը և մեթոդները.

Հետազոտությունն անցկացվել է հստակ տարաբաժանված 2 հիմնական փուլերով, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր խնդիրները և ամփոփվել համապատասխան եզրակացություններով: Հետազոտության առաջին, մախնական փուլը՝ ստեղծարարության զարգացման երկայնական (լոնգիտյուդային) հետազոտությունը, կատարվել է 2001-2004թթ., որի փորձարարական եզրակացությունները, գրականության վերլուծությանը զուգընթաց հիմք են հանդիսացել հետազոտության երկրորդ փուլի պլանավորմանը:

Հետազոտության երկրորդ փուլն իր հերթին իրականացվել է երկու ենթափուլերով. ա) ստեղծարարության, մտածողական որակների և ոճերի, լուծման որոնման արդյունավետության և անձնային առանձնահատկությունների թեստավորում և ռեթեստավորում: բ) հավաստող գիտափորձի անցկացում՝ ստեղծարարության զարգացման ուսումնասիրման հոգետեխնիկաների համակարգի միջոցով:

Փորձարարական ճանապարհով ստացված տվյալները մշակվել են մաթեմատիկական մեթոդներով և անհատական ու խմբային որակական համեմատության միջոցով:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տեսական վերլուծության, դիտման, թեստավորման և գիտափորձի մեթոդները: Թեստավորման ընթացքում կիրառվել են ստեղծարարության (Ե. Տորրենս), մտածողության վերլուծական հատկությունների (Բ. Պոկրովսկի) ուսումնասիրման թեստերը, կոնստրուկտիվ մտածողության գործակցի (Ս. Էպշտայն), մտածողական ոճերի (Կ. Վենկեր) և անձի անհատական առանձնահատկությունների (Ռ. Քեթթել) ուսումնասիրմանն ուղղված հարցարանները, հավաստող գիտափորձն անց է կացվել «Մտքերի պահարան», «Գլխացավի ծառ» վարժություններով և «Ուղեղային գրոհ» (Օսթրոն), «Մտային քարտեզավորում» (Տ. Բյուզեն) ստեղծարար հոգետեխնիկաներով:

Հետազոտության մասնակիցները.

Հետազոտական աշխատանքներում՝ որպես փորձարկվողներ, ներգրավվել են.

1. Առաջին փուլում՝ Երևանի պետական համալսարանի հոգեբանության բաժնի 1-4-րդ կուրսերի 120 և ֆիզիկայի ֆակուլտետի առաջին կուրսի հասուկ խմբի 15 ուսանողներ:

2. Երկրորդ փուլում՝ ՀՀ Շախմատի ակադեմիայի 15 անդամներ, որոնցից 5-ը մասնագետներ, ովքեր առանձնացվել են՝ որպես փորձագիտական խումբ, և մասնակցել միայն թեստավորմանը, 10-ը՝ աշակերտներ, ովքեր էլ, աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, բաժանվել են երկու 5 անդամանոց խմբերի՝ կրտսեր (12-14տ.) և ավագ (14-18տ.): Երկրորդ փուլում հետազոտական խմբի ընտրության սկզբունքները հետևյալն էին՝

- ստեղծագործական աշխատանքի ուսումնասիրումը առավել հստակ արտահայտվում է շախմատային մարզաձևում և հնարավոր է առանձնացնել աշխատանքի արդյունավետության գնահատման հստակ սկզբունքներ (Ա. Բինե, Ի. Ն. Ղյակով, Ն. Վ. Կռոզիուս):

- կախված սպորտային ձեռքբերումներից, համապատասխան կարգից և տարիքից կարելի է կատարել ենթախմբերի հստակ տարաբաժանում (Ն. Վ. Կռոզիուս):

Հետազոտության գիտական նորույթը.

1. Միավորվել և համակարգվել են գիտական գրականության տեսական և հետազոտական տվյալները՝ հնարավորություն տալով դիտարկել ստեղծարարությունը, որպես ինտեգրալ, հոգեկան տարբեր կառույցների հետ սերտ փոխկապակցված որակ իր զարգացման մեջ:

2. Կարևորվել է ստեղծարարության զարգացման օրինաչափությունների փոխազդեցությունը անձի անհատական առանձնահատկությունների հետ՝ վերջիններս դիտարկելով որպես ստեղծարարության զարգացման գործընթացի անբաժանելի բաղադրիչներ:

3. Հիմնավորվել և մշակվել է ստեղծարարության ուսումնասիրման յուրահատուկ համակարգ, որը ծառայում է որպես ճանաչողական մեթոդ ստեղծարարության զարգացման ընթացքի ուսումնասիրման, ուղղորդման և համակարգման համար:

4. Կառուցվել է ստեղծարարության զարգացման կառուցվածքային մոդել, որը կարող է արդյունավետորեն ներդրվել հոգեբանական աշխատանքի տարբեր ոլորտներում:

Տեսական նշանակությունը.

1. Մեկ ընդհանուր տրամաբանական առանցքի շուրջ ի մի են բերվել ստեղծագործական մտածողության և ստեղծարարության անտիկ ժամանակաշրջանից մինչ մեր օրերը տարբեր գիտություններում և գիտակարգերում մշակված տեսությունները:

2. Առաջին անգամ միավորվել են ստեղծարարության արևմտյան (Տորրենս, Շտերնբերգ, Գիլֆորդ) և ռուսական (Դրուժնին, Խոլոդնայա) տեսությունները մեկ ընդհանուր համակարգի սահմաններում, իսկ ստեղծարարությունը դիտարկվել է և՛ որպես գործընթաց, և՛ որպես արդյունք, և՛ որպես ինտեգրալ անձնային որակ՝ յուրաքանչյուրը ուսումնասիրելով արտահայտման իր փուլում:

Գործնական նշանակությունը.

1. Հետազոտության արդյունքների գործնական ներդրումը օգնում է համակարգել ստեղծարար մոտեցում պահանջող տարբեր ոլորտներում

ընդգրկված աշխատակիցների և սովորողների ստեղծարարության զարգացմանն ուղղված աշխատանքները՝ նրանց գործունեության արդյունքները դարձնելով առավել կիրառական և արդյունավետ:

2. Ստեղծարարության զարգացման և անձի անհատական ու մտածողական առանձնահատկությունների փոխհարաբերությունների մասին ստացված տվյալները, օգնում են օգտագործել այս երկուսի փոխմիասնությունը ստեղծարարության զարգացման գործընթացներում:

3. Ստեղծարար հոգետեխնիկաներով և վարժություններով մեր կողմից կազմված համակարգը, կիրառվելով առաջին անգամ, թույլ է տվել ուսումնասիրել անձնային առանձնահատկությունների փոփոխություններն աշխատանքի ընթացքում՝ հնարավորություն ընձեռելով յուրաքանչյուր աշխատախմբի համար կազմել ստեղծարարության զարգացման յուրահատուկ համակարգ:

Պաշտպանությանը ներկայացվող դրույթները.

1. Ստեղծարարությունը ինտեգրալ հոգեկան որակ է, որն անձի կառուցվածքում միավորում է և՛ մտածողական համապատասխան որակներ, և՛ անձնային առանձնահատկություններ՝ առավելապես ի հայտ գալով անձի կողմից խնդրի լուծման և որոշման ընդունման գործընթացներում:

2. Ստեղծարարության զարգացումը հնարավոր է ուղղորդել ստեղծարար հոգետեխնիկաների համապատասխան թեյնինգային ծրագրով: Աշխատանքի ընթացքում ստեղծարարության զարգացման օրինաչափությունները անմիջականորեն փոխազդում են որոշման ընդունման առանձնահատկությունների հետ, որոնք էլ արտացոլվում են մտային քարտեզներում:

3. Ստեղծարարության՝ ինչպես ինքնուրույն, այնպես էլ ուղղորդված զարգացումը առավելապես իրականանում է զուգորդական դաշտի և ոչ ստանդարտ մտածողության հենքի վրա և ընթանում է երեք հիմնական փուլերով՝ լուծման տարբերակների բազմաքայլություն, լուծման տարբերակների բազմադիմություն, միջտարբերակային կապերի դիտարկում:

4. Ստեղծարարության զարգացումը հետազոտական խմբում առաջ է բերում անձնային առանձնահատկությունների և մտածողական ոճերի ուղղորդված փոփոխություն դեպի փորձագիտական խումբ: Ջարգացումն առավելապես ուղեկցվում է անձի հաղորդակցական ոլորտի և մտածողության վերլուծականության զարգացմամբ: Հնարավոր է նաև մտածողական հիմնական ռազմավարության փոփոխություն:

Աշխատանքի փորձարկումը: Հետազոտության կիրառական մասն ներդրվել է ՀՀ Շախմատի ակադեմիայում՝ բարձրացնելով ծրագրին մասնակցած սաների կողմից շախմատային խնդիրների լուծման գործընթացի արդյունավետությունը:

Հետազոտությունների արդյունքների վերաբերյալ զեկույցներ են կարդացվել «Երիտասարդ հոգեբանների 1-ին հանրապետական» և «ՀՀ անկախության 15-րդ տարեդարձին նվիրված երիտասարդ հոգեբանների» գիտաժողովներում, ԵՊՀ Հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի նիստերում, ՀՀ Շախմատային ակադեմիայի մարզական հավաքների ժամանակ:

Հետազոտության արդյունքները 5 հոդվածներով հրատարակվել են հանրապետության համապատասխան գիտական հանդեսներում:

Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքը կազմված է 134 էջից, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գիտագործնական առաջարկություններից, գրականության ցանկից (144 աղբյուր, որոնցից 16-ը հայերեն, 117-ը օտարալեզու և 11 համացանցային) և 3 հավելվածներից: Աշխատանքում ներկայացված են 31 նկար, 8 աղյուսակ, 12 գրաֆիկ, որոնցից 8-ը դիագրամի տեսքով:

ԱՆԵՍԱՏՆՔԻ ԳԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված է հետազոտական ընտրանը, ձևակերպված են աշխատանքի մեթոդաբանական ու տեսական հիմքերը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության առարկան, օբյեկտը, նպատակը, խնդիրները, վարկածը, փուլերը և պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության ***«Ստեղծարարության ուսումնասիրման հիմնախնդրի վերլուծություն»*** խորագրով առաջին գլխում համառոտ անդրադարձ է կատարված ստեղծագործական մտածողության, ստեղծագործական աշխատանքի և ստեղծարարության գիտական ուսումնասիրություններին սկսած անտիկ ժամանակաշրջանից մինչ մեր օրերը և մանրամասը քննարկված ու ներկայացված են դրանց հիմնական ձեռքբերումները:

Ստեղծարարությունը ուսումնասիրվել է դեռևս անտիկ ժամանակաշրջանում, ուր հարաբերվել է հայեցողության՝ որպես մարդու բարձրագույն ընդունակության հետ: Միջնադարում ստեղծարարությունը փոխակերպվում է արարչագործության, անջատվում է մարդուց և վերագրվում միայն Աստծուն, իսկ մարդուն մնում է միայն ծանոթանալ աստվածային արարչագործությանը: Վերածննդի ժամանակաշրջանում է, որ մարդկային ստեղծարարությունը մղվում է գիտական ուսումնասիրությունների առաջնային պլան, իսկ ստեղծարարության կենտրոնական օղակ սկսում է դիտարկվել անձը:

Սկսած 19-րդ դարից ստեղծարարության հիմնախնդրի ուսումնասիրությունն առավելապես անցավ հոգեբանական հետազոտությունների ոլորտ: Ստեղծարարության հիմնախնդրի տեղափոխումը նորի ստեղծման և որոշումների ընդունման ոլորտ, ուր վերջինս սկսեց հասկացվել որպես գործընթաց, հոգեբանական հետազոտությունների առաջին ձեռքբերումն էր: Առաջինը Գ. Ուոլլեսն էր, որ ստեղծարարությունը դիտարկելով որպես գործընթաց, բաժանեց այն 4 փուլերի՝ *նախապատրաստում, ինկուբացիա, արտահայտում, ճշմարտացիության ստուգում*: Կատարվեց ոչ սոսկ պատահական բաժանում, այլ գտնվեց շրջադարձային լուծում ստեղծարարության տեսության զարգացման համար: Գ. Ուոլլեսն ապացուցեց, որ ստեղծարար լուծումները ոչ թե առաջանում են պատահաբար կամ թելադրվում ինչ-որ անորոշ ուժի կողմից, այլ ունեն իրենց զարգացման սկզբունքներն ու օրինաչափությունները: Հետագա հետազոտություններում, ուր ստեղծարարությունը դիտարկվում էր որոշման ընդունման գործընթացում, այն սկսեց ուսումնասիրվել որպես բազմաթիվ այլընտրանքներից առավել արդյունավետի ընտրության մեխանիզմ, իսկ ստեղծարար որոշումը՝ որպես ներքին հոգեբանական գործընթացների արդյունք:

Այս գլխում քննարկվում են նաև սահմատական և խմբային ստեղծարար որոշումների ընդունման օրինաչափությունները: Բացահայտված են յուրաքանչյուրի առավելություններն ու թերությունները և ներկայացված են դրանց հառաջարկված «խմբային մտածողության» էֆեկտը: Այն ցույց է տալիս, որ մարդկանց նույնակարծության ձգտումը կարող է որոշման տարբերակների գնահատումների իրատեսության նվազման բերել: Խմբային քննարկման ժամանակ միշտ էլ հայտնվում են էնտուզիաստներ, որոնք փորձում են խմբին զերծ պահել այն ինֆորմացիայից, որը կանխագծված որոշման տարբերակի հանդեպ կարող է անվստահություն առաջ բերել: Խմբերն իրենց մեջ կրում են նաև ծայրահեղ որոշումների ընդունման վտանգը՝ այսպես կոչված «խմբային բեռայնացում» (*groupshift*): «Խմբային բեռայնացման» մասին խոսում ենք այն ժամանակ, երբ խմբային որոշման ընդունման ռիսկը տարբերվում է (միջին) ռիսկից, որը խմբի ամեն մի անդամի համար առանձին վերցված նորմալ կհամարվեր: Այս տարբերակումը կարող է ստանալ կամ չեզոք որոշման ընդունման և պահպանողականության ուղղություն, կամ տանել բարձր ռիսկայնության ընդ որում երկրորդը առավել հաճախ է հանդիպում:

Խմբում որոշման ընդունման վրա կարող են ազդել նաև հուզական գործոնները: Բրենդշտետտերը փորձարարական ճանապարհով ուսումնասիրել է համակրանքի, թշնամանքի ազդեցությունը փոխհամաձայնության առաջացման և արդյունավետ ու ստեղծարար խմբային որոշումների կայացման համար: Բազում հոգեբանների կողմից անհատական որոշումների ընդունման և անհատական մակարդակում ստեղծարարության ուսումնասիրման համար իդեալական մոդել համարվել է շախմատային խաղը և շախմատիստի անձը: Շախմատային խաղի յուրահատկությունը նրանում է, որ շախմատիստը, գտնվելով անընդհատ փոփոխվող իրավիճակում, նոր պայմաններում նոր ռազմավարության մշակման և նոր որոշման ընդունման անհրաժեշտության առջև է կանգնած: Այսպիսով շախմատային խաղում մարդկային ինտելեկտին և ստեղծարարությանը հակադրվում է իր բնութագրիչների հարստությամբ իրական աշխարհին մոտ միջավայր :

Ինչպես դիպուկ մշել է Ա. Բինեն. «Եթե հնարավոր լիներ դիտարկել շախմատիստի ուղեղը, ապա այնտեղ կտեսնեինք զգայությունների, պատկերների, գաղափարների, հույզերի և ապրումների մի ամբողջ աշխարհ, գիտակցության վիճակների խմորումներ, որոնց համեմատ մեր ենթադրությունները միայն կոպիտ սխեմաներ են»: Մինչ այժմ արժեքավոր է նրա այն դրույթը, որ հենց շախմատային խաղի միջոցով կարելի է բացահայտել հիշողության և տրամաբանական մտածողության հարաբերության հարցը ստեղծագործական գործունեությունում: Ըստ Բինեի հնարավոր չէ համեմատել, ասենք, երկու գրողների կամ գիտնականների ինտելեկտուալ օժտվածությունը, որը շախմատում միանգամայն հնարավոր է ուղիղ ձևով խաղով:

Հոգեբանական գիտության մեջ շախմատիստի մտային աշխատանքի միջոցով մտածողության գործընթացների ձևայնացման առանձնահատկությունների ուսումնասիրում է կատարվել՝ հենց շախմատային խաղի ընթացքում: Եվ այստեղ է, որ մենք բախվում ենք այս ոլորտի հիմնական խնդիրներից մեկին՝ ստեղծագործողի և որոշում ընդունողի անձի ուսումնասիրմանը:

Այս հիմնախնդիրներն են քննարկվում և ուսումնասիրվում ատենախոսության երկրորդ **«Ստեղծարարության դերն ու զարգացման առանձնահատկությունները անձի կառուցվածում»** գլխում:

Ստեղծարարությունը նախ և առաջ քննարկել ենք մտածողության և ինտելեկտի փոխհարաբերությունների համակարգում՝ առավել փոխկապակցված մտածողության շաբլոն, ոչ շաբլոն և քննադատական տեսակների հետ (Богов Э. Д., 2005, Халперн Д., 2000): Է. դե Բոնոն առանձնացնում է երեք հիմնարար հետևյալ դրույթները.

1. Շաբլոն մտածողությունը սահմանափակ է նոր մտքեր ստանալու համար :

2. Նոր մտքեր ստանալու համար անհրաժեշտ է օգտագործել ոչ շաբլոն (լատերալ) գործընթացներ:

3. Ոչ շաբլոն մտածողության նպատակն է ստանալ ավելի պարզ, խորին և արդյունավետ նոր մտքեր:

Ըստ նրա, ոչ շաբլոն մտածողության աշխատանքը ամփոփվում է հետևյալ երեք հիմնարար սկզբունքներում. ա) բևեռացնող զաղափարի գիտակցում, բ) շաբլոն մտածողության վերահսկողությունից ազատում, գ) պատահականության օգտագործում: Սակայն ստեղծարարության առավելագույն արդյունավետ դրսևորման համար ոչ շաբլոն մտածողության կիրառումն անհրաժեշտաբար ենթադրում է քննադատական մտածողության օգտագործումը ևս: Քննադատական մտածողությունը օգտագործվում է առաջարկված որոշումների ստուգման և դրանց կիրառման ոլորտի ճշգրտման նպատակով: Այս սահմանումը մտածողությունը բնութագրում է, որպես մի գործընթաց, որում առանձնանում են ղեկավարվածությունը, հիմնավորվածությունը և նպատակաուղղվածությունը: Այլ սահմանումներում քննադատական մտածողությանը հատկանշական են տրամաբանական մտահանգումների կառուցումը, հիմնավորված որոշումների ընդունումը: Այս բոլոր տարբերակները ենթադրում են հոգեկան ակտիվություն, որն ուղղված է կոնկրետ խնդրի լուծման: Ինտելեկտի և ստեղծարարության հարաբերակցության գիտական ուսումնասիրություններում կարելի է առանձնացնել հիմնարար երեք խումբ տեսություններ:

1. Որպես այդպիսին ստեղծարար ընդունակություններ չկան: Ստեղծարար վարքի պատճառներ են հանդիսանում դրդապատճառները, արժեքները, անձնային որակները (Ա. Մալոու, Ա. Օլոխ, Դ. Բոգոյավլենսկայա):

2. Ինտելեկտը և ստեղծարարությունը ուղիղ համեմատական են (Դ. Վեկսլեր, Հ. Այզենկ, Ռ. Շտերնբերգ):

3. Ստեղծարարությունը ինտելեկտից անկախ գործոն է (Ջ. Գիլֆորդ, Յա. Պոնոմարյով, Ե. Տորրենս):

Այս երեք խումբ տեսություններից առավել հիմնավորվել և տարածում է գտել երրորդ՝ ինտելեկտի և ստեղծարարության «սահմանային տեսությունը», որի համաձայն ցածր ինտելեկտուալ օժտվածության դեպքում ստեղծարարության դրսևորումն անհնար է, իսկ բարձր ինտելեկտուալ օժտվածության պարագայում՝ ստեղծարարությունը դառնում է անկախ փոփոխական:

Այս գլխում առանձին քննարկված են նաև ստեղծարար անձնավորության անհատական առանձնահատկությունների համակարգը (Կ. Յունգ, Կ. Գոլդշտեյն, Կ. Ռոջերս, Օ. Տիխոմիրով, Ռ. Շտերնբերգ): Սակայն այս հիմնահարցի վերլուծու-

թյուններն առանձնանում են իրենց հատվածական բնույթով և ներքին հոգեբանական կապերի բացահայտման ոչ բավարար հիմնավորվածությամբ:

Այս գլխի երկրորդ և երրորդ ենթաբաժինները նվիրված են ստեղծարարության զարգացման միջոցների քննարկմանն ու ուսումնասիրմանը: Մենք կարող ենք առանձնացնել ստեղծարարության զարգացման երկու հիմնական ուղիներ՝ բնական միջոցների (*Богоявленская Д. Б., 1983, Дьюи Д., 1999, Аиан Д.ж., 1997*) և հատուկ հոգետեխնիկաների (*Альтшуллер Г. С., 1991, Бьюзен Т., 2005, Соколов А. Б., 2006, Осборн А., 1953*) կիրառմամբ:

Ջորդան Այանը առաջարկում է ստեղծարարության զարգացման 10 ստրատեգիաներ: Հիմնական նպատակն է սովորեցնել անձին օգտագործել «4 գումարեխիներ»՝ հավաքել պլանավորում, հաստատականություն, համբերություն, կիրք: Գործունյա ստեղծարար անձի ձևավորումը մեծ չափով կապվում է իմացական ակտիվության զարգացման հետ, որի հիմք են ծառայում իմացական հետաքրքրությունները՝ նպաստելով մտավոր գործունեության առավել կենտրոնացմանը: Իմացական ակտիվությունը հիմնվում է ինչպես բնածին նախադրյալների, այնպես էլ անձնային որակների վրա: Զ. Դյուին կարևորում է նաև գիտելիքի կազմակերպվածությունը և ակտիվ պատկերի ներշնչման նշանակությունը: Վերջինիս շեշտադրմանը հանդիպում ենք նաև Օ. Տիխոմիրովի հետազոտություններում:

Ստեղծարարության զարգացման բնական միջոց է Մ. Խոլոդնայայի առաջարկած ԿՆՍԻՅ համակարգի զարգացումը:

Կ-Կոմպետենտություն. սա գիտելիքների կազմակերպումն է, որն ապահովում է արդյունավետ որոշումների ընդունումը գործունեության որոշակի ոլորտում,

Ն-նախաձեռնություն. նոր ինֆորմացիա փնտրելու և գաղափարներ առաջարկելու ինքնուրույն ցանկություն,

Ս- սուբյեկտիվ նորի ստեղծման գործընթացը,

Ի-ինքնակարգավորում. սեփական գործունեության կառավարման ունակություն,

Յ- յուրահատկություն. անհատական-յուրահատուկ ինտելեկտուալ մոտեցման ցուցաբերում: Այս համակարգի կիրառումը բերում է ստեղծարարության զարգացմանը և հեշտացնում նորի ստեղծման գործընթացը:

Հոգեբանական գրականության մեջ կարելի է առանձնացնել երեք հիմնական կայացած ստեղծարար տեխնիկաներ, որոնք այժմ մեծ արդյունավետությամբ կիրառվում են համաշխարհային տարբեր կազմակերպություններում: Դրանք են Գյուտարարական խնդիրների լուծման տեսությունը (*Альтшуллер Г. С., 1991, Альтшуллер Г. С., Злотин Б. Л. и др. 1989*), մտային քարտեզավորումը (*Бьюзен Т., 2005, MacKinnon D.W., 2006*) և ուղեղային գրոհը (*Кудрявцев А. В., 1999, Осборн А., 1953, Scott Berkun, 2004*):

ԳլՆՏ-ի հիմնական միտքն այն է, որ տեխնիկական համակարգերը առաջանում ու զարգանում են ոչ թե պատահական, այլ որոշակի օրենքների համապատասխան. կարելի է ուսումնասիրել և օգտագործել այդ օրենքները: ԳլՆՏ-ն նոր տեխնիկական մտքերի արտադրությունը դարձնում է կոնկրետ գիտություն: Տեսության բոլոր օրենքները ստուգված են, ճշգրտված, իսկ երբեմն բացահայտված պատենտային ինֆորմացիայի մեծ ծավալի վերլուծությունից, ցանկացած նորամուծություն անցնում է մանրամաստ ստուգում և ճշգրտում պատենտային ինֆորմացիայի և պատմատեխնիկական նյութերի հիման վրա:

Այսպիսով ԳԽՆՏ-ն կարելի է համարել գյուտարարների շատ սերունդների փորձի ուժեղ կողմերի ընդհանրացում:

Փորձելով միավորել տարբեր աղբյուրներից վերցված մոտեցումները՝ կարելի է սահմանել «Ուղեղային գրոհ»-ը որպես խմբային ստեղծարար մտածողության գործընթաց, իսկ ավելի ճիշտ, խմբից կարճ ժամանակահատվածում մեծ քանակությամբ մտքեր ստանալու մեթոդ: Որպես չափանիշ համարվում է 1,5 ժամում (2 ակադեմիական ժամ) մոտ հարյուր նոր մտքերի ստեղծումը: Ա. Օսբորնը պնդում էր, որ ծնվող մտքերի քանակության հետ գիտակցաբար գործառելու համար երկու սկզբունքներ գոյություն ունեն. ա) հետաձգված քննադատական գնահատում, բ) առաջարկված մտքերի քանակության ավելացումը բերում է որակական փոփոխության:

Մտային քարտեզավորումը (ՄՔ) հոգեբանության մեջ առաջին անգամ ծնվեց և սկսեց շրջանառվել որպես մտքերի և գաղափարների ներկայացման և փոխկապակցման մեթոդ: ՄՔ-ի հիմնարար կանոնները 20-րդ դարի վաթսուևականներին մշակել է պրոֆեսոր Զ.Նովակը՝ ելնելով Դ.Օգուբելի հայեցակարգից: Սակայն հեղինակային իրավունքը վերցրել է Տ. Բյուզենը՝ իր մեթոդն անվանելով Mind Maps, որի հիմքի վրա մշակվել են մի շարք համակարգչային ծրագրեր: Տ. Բյուզենը մտային քարտեզավորման տեխնիկան ներկայացնում է հետևյալ կերպ.

- Մտային քարտեզը կազմվում է կենտրոնական բառի կամ կոնցեպցիայի վրա, որի շուրջ տեղադրվում են նրա հետ կապված 5-10 գլխավոր գաղափարները:

- Դուստր բառերից յուրաքանչյուրը նորից շրջապատվում է 5-10 գլխավոր մտքերով:

Ըստ հեղինակների, ստացված գրաֆիկական կառուցվածքը թույլ է տալիս նորոպի դիտարկել կենտրոնական խնդիրը, գտնել նոր կապեր այդ խնդրի և սուբյեկտի փորձի միջև:

Փորձարարական աշխատանքի երկրորդ փուլի ընթացքում, հավաստող գիտափորձն անցկացնելիս, մենք աշխատել ենք մտային քարտեզավորման և ուղեղային գրոհի մեր կողմից մշակված միասնական ծրագրով:

Առենայտության երրորդ **«Ստեղծարարության զարգացման փորձարարական ուսումնասիրում»** գլխում ներկայացված են փորձարարական հետազոտության հոգեբանական վերլուծության արդյունքները:

3.1. Փորձարարական աշխատանքի առաջին փուլ - ստեղծարարության զարգացման ուսումնասիրում

Հետազոտությունը կրում էր երկայնական (լոնգիտյուդային) բնույթ և անց է կացվել 2001-2002 թվականներին: Հետազոտությանը մասնակցել են ԵՊՀ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետի հոգեբանության բաժնի 1-4-րդ կուրսերի 120 ուսանողներ: Ուսումնասիրվել են ստեղծարարության փոփոխությունները բուհական ուսուցման տարիներին:


Ստացված արդյունքների վերլուծության արդյունքում կատարվել են հետևյալ եզրակացությունները.

1. Առաջին կուրս ուսանողներն ընդունվում են ստեղծարարության նույն ցուցանիշներով (81-82 միավորներ):

2. Ուսուցման առաջին տարվա ընթացքում գրանցվում է ստեղծարարության 15-20 միավորով աճ:

3. Երրորդ կուրսի վերջում ստեղծարարության աճը կանգ է առնում:

4. Չորրորդ կուրսում նկատվում է ստեղծարարության անկում: Տես՝ գրաֆիկ 1



Գրաֆիկ 1 - Ստեղծարարության փոփոխությունները ԵՊՀ Հոգեբանության բաժնի բակալավրիատի 1-4-րդ կուրսերում

5. Հաստատվում է այն օրինաչափությունը, որ ստեղծարարությունը փոփոխվում է առավելապես ազատ զուգորդումներ ստեղծելու ընդունակության հաշվին, իսկ հնարամտությունը և միավորելու ընդունակությունը ավելի հաստատուն որակներ են:

6. Հաստատվում է ինտելեկտի և ստեղծարարության հարաբերակցության «սահմանային» տեսությունը:

Բարձր ստեղծարարության խմբում նշանակալի կորելացիոն կապերն ավելի շատ են, և դա վկայում է ստեղծարար անձի մոտ անձնային առանձնահատկությունների դերի ավելացման մասին:

Ստացված եզրակացությունները հիմք հանդիսացան պլանավորելու հետազոտության առաջին փուլի երկրորդ ենթափուլը (2002-2004թթ.): Այս ենթափուլի նպատակն էր պարզել հոգետեխնիկաների ազդեցությունը ստեղծարարության զարգացման և փոփոխությունների վրա, որի համար մշակվեց ստեղծարարության զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրման համակարգ՝ ուղեղային գրոհի և մտային քարտեզավորման համադրությամբ:

Որպես փորձարարական խումբ ընտրվեց ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի առաջին կուրսի հատուկ խումբը՝ հիմք ընդունելով այն սկզբունքը, որ թրեյնինգային խումբը պետք է լինի փոքր՝ մինչև 10 հոգի՝ կիրառված համակարգի արդյունավետությունը ապահովելու համար և ներկայացնի, ի հակադրություն հոգեբանության բաժնի ուսանողների, ԵՊՀ բնագիտական թեղ՝ համապատասխան համեմատություններ իրականացնելու համար: Խմբում սովորող 10 ուսանողներն էլ ընդգրկվեցին հետազոտության մեջ:

Հետազոտության այս բաժնի և ամբողջ առաջին փուլի արդյունքում կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Որոշ ժամակակահատվածում ստեղծարար հոգետեխնիկաների (հետազոտության շրջանակներում՝ ուղեղային գրոհ և մտային քարտեզավորում) շարունակական կիրառումը ստեղծարարության և անձնային մտածողական ոլորտում առաջ է բերում հետևյալ վերակառուցումները.

ա) ստեղծարարությունը աճում է՝ ի հաշիվ իր ազատ զուգորդումներ ստեղծելու ընդունակության, բ) ոչ ստանդարտ մտածողության, հնարամտության և միավորման ընդունակության բաղադրիչներն ավելի կայուն են և դժվար են ենթարկվում զարգացման, գ) ավելի հաստատուն են նաև վարքի ղեկավարման, կատեգորիկ, սնահավատ և էգոտերիկ մտածողության առանձնահատկությունները, դ) աճում է հուզական ղեկավարման մակարդակը, որն էլ պայմանավորում է կոնստրուկտիվ մտածողության գործակցի աճը, ե) աշխատանքից հետո աճում է «վերլուծաբան» տիպի արտահայտվածությունը խմբում, որով էլ վերջինս դառնում է կտրուկ գերիշխող մյուս այլ մտածողական տիպերի հանդեպ:

3.2 Փորձարարական աշխատանքի երկրորդ փուլ - ստեղծարարության զարգացման օրինաչափությունների ուսումնասիրումը անձնային առանձնահատկությունների դրսևորմանը զուգընթաց:

Փորձարարական աշխատանքի երկրորդ փուլում հետազոտությանը՝ որպես փորձարկվողներ, մասնակցեցին ՀՀ Շախմատի ակադեմիայի շախմատիստներ՝ ելնելով հետևյալ սկզբունքներից.

- շախմատը ստեղծարարության և որոշման ընդունման մեխանիզմների ուսումնասիրման կատարյալ մոդել է, որը նաև հնարավորություն է ստեղծում գրավոր մյուսի հիման վրա կատարել շախմատիստի կողմից ընդունված որոշումների և ցուցաբերած ստեղծարարության կառուցվածքային վերլուծություն և դիտարկել փոփոխություններն այդ ոլորտում:

- խմբում ընդգրկված էին դպրոցական տարիքի շախմատիստներ, որը հնարավորություն է ստեղծում չեզոքացնել մասնագիտական կողմնորոշման ազդեցությունը ցուցաբերված ստեղծարարության առանձնահատկություններին:

- խումբը, ելնելով պարապմունքների տարիքային խմբերից, հնարավոր էր բաժանել առավել փոքր միավորների ստեղծարար տեխնիկաներով իրականացվող աշխատանքի առավել արդյունավետ կատարման համար:

- շախմատում, ելնելով կարգից և փորձառությունից առավել հեշտ է ընտրել հաջողության հասած մասնագետների համապատասխան փորձագիտական խումբ, որոնց տվյալների հետ մեր ստացված տվյալների համեմատումը կտա ստեղծարարության զարգացման օրինաչափությունների ուսումնասիրման հավելյալ հնարավորություններ:


Գիտափորձին մասնակցել են շախմատիստների երկու խումբ. Շախմատի ակադեմիայի սաներ՝ 12-18տ, որոնք, աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, իրենց հերթին բաժանվել են երկու ենթախմբերի կրտսեր՝ 12-14տ (5 հոգի) և ավագ՝ 14-18տ(5 հոգի) և մասնագետներ (5 հոգի), որոնք հետագայում առանձնացվել են որպես փորձագիտական խումբ:

Հետազոտությունը անցկացվել է երեք փուլով. համապատասխան որակների թեստավորում և ռեթեստավորում, հավաստող գիտափորձ ստեղծարար հոգետեխնիկաների կիրառմամբ: Փորձագիտական խումբը մասնակցել է միայն առաջնային թեստավորմանը: Թեստավորվել են հետևյալ հոգեկան որակներն ու առանձնահատկությունները.


ա) ստեղծարարությունը՝ Տորրենսի թեստով, բ) կոնստրուկտիվ մտածողության գործակիցը՝ Էպշտայնի հարցաթերթով, գ) մտածողության վերլուծական հատկությունները՝ օրինաչափությունների հաստատման Պոկրովսկու թեստով, դ) մտածողական ուժերը՝ Կառլ Վենկերի հարցաթերթով, ե) անձի անհատական առանձնահատկությունները՝ Քեթթելի 16 PF հարցարանով:

Հավաստող գիտափորձը՝ պայմանավորված հետազոտական ընտրանքի առանձնահատկություններով, ընթանում էր երկու փուլով. ա) նախնական՝ հետազոտվողներին հոգետեսխնիկաների ծանոթացում, բ) հիմնական՝ ստեղծարար տեսխնիկաներով աշխատանք: Նախնական փուլում հետազոտական ընտրանքը աշխատել է «Մտքերի պահարան» և «Գլխացավի ծառ» մեթոդներով: Հիմնական փուլում հավաստող գիտափորձն իրականացվել է «Մտային քարտեզավորում» և «Ուղեղային գրոհ» մեթոդներով:

Թեստավորման և ռեթեստավորման արդյունքները կներկայացնենք համեմատական կարգով, սակայն մինչ այդ անդրադառնանք հավաստող գիտափորձի հիմնական արդյունքներին՝ փորձարկվողների կողմից կազմված մտային քարտեզների կառուցվածքային վերլուծության միջոցով: Քարտեզների վերլուծության հիմքում դրվել են քարտեզների բազմամակարդակությունը, բազմադիմությունը և լուծման տարբերակների միջև կապեր հաստատելու ընդունակությունը: Նկար 1 և 2-ում ներկայացված են փորձարկվողների կողմից հավաստող գիտափորձի տարբեր փուլերում կազմված մտային քարտեզների օրինակներ:



Նկար 1 - Մտային քարտեզի օրինակ




Նկար 2 - Մտային քարտեզի օրինակ

Ինչպես նկատելի է քարտեզը փոխվում է իր կառուցվածքում՝ ավելանում են առաջարկված լուծումների թիվը և հնարավոր լուծումների ուղղությունները:

Հաջորդ հանդիպումների ընթացքում կազմված քարտեզներում, որոնք մենք անցկացրել ենք կոնկրետ շախմատային խնդիրների լուծման շուրջ, կարելի է նկատել նաև տարբեր տարբերակների միջև ընդգծվող կապերի ավելացում:


Այժմ անդրադառնանք թեստավորման և ռեթեստավորման արդյունքների համեմատական վերլուծությանը՝ սկզբում քննարկելով ստեղծարարության ցուցանիշները:



Դիագրամ 1 - Ստեղծարարության թեստավորման և ռեթեստավորման արդյունքները հետազոտական և փորձագիտական խմբերում

Դիագրամից երևում է, որ չի փոփոխվել միայն միավորման ընդունակության որակը, իսկ մյուս որակները և հետևաբար նաև ստեղծարարությունն ամբողջապես հետազոտական ընտրանքում մինչև հավաստող գիտափորձը ավելի ցածր էին, քան փորձագիտական խմբում, իսկ գիտափորձից հետո բոլոր որակները համապատասխանաբար աճում են: Արդյունքում կարող ենք փաստել, որ ստեղծարար հոգետեխնիկաների կիրառմամբ հավաստող գիտափորձն արդյունավետորեն ծառայել է իր նպատակին և արդյունքում ֆիքսվել է համապատասխան որակների զարգացում:

Հաջորդ խնդիրը, որը ծագում է հետազոտության նպատակից, ստեղծարարության զարգացման և անձնային առանձնահատկությունների ու մտածողական ուժերի փոխհարաբերության հարցն է, որը և թելադրում է ստացված տվյալների վերլուծության հաջորդ ուղղությունը: Դրա համար նախ և առաջ քննարկենք Քեթթելի հարցարանով թեստավորման և ռեթեստավորման արդյունքները, ինչպես նաև դրանք համեմատենք փորձագիտական խմբի տվյալների հետ: Դիագրամ 2-ում ներկայացված են համապատասխան անձնային առանձնահատկությունների միջինները:



Պիագրամ 2 - Անձնային առանձնահատկությունների թեստավորման և ռեթեստավորման արդյունքները հետազոտական և փորձագիտական խմբերում

Պիագրամից երևում է, որ հետազոտական խմբում հավաստող գիտափորձից հետո փոփոխության են ենթարկվել հետևյալ անձնային հատկությունները.

- աճել են MD, B, E, F, Q1, Q3 և Q4,
- նվազել են C, G, L և N:

Մնացած անձնային հատկությունները մնացել են անփոփոխ: Սակայն կախված թեստի էքսպերիմենտալ միջինի և փորձագիտական խմբի ցուցանիշների հանդեպ ունեցած փոփոխություններից այժմ կքննարկենք նշված հատկություններից մի քանիսը:

Աճել է F անձնային առանձնահատկության ցուցանիշը՝ հավասարվելով փորձագիտական խմբի ցուցանիշին: Այս հատկությունը վերաբերում է շփման հուզական գունավորմանը և դինամիկությանը և վկայում է, որ խմբում նկատվում է առավել ուժեղ և կայուն սոցիալական կապերի հաստատման միտում: Հետաքրքիր է նաև Q1 անձնային հատկության աճը, քանի որ փորձագիտական խմբում այն չափազանց բարձր արտահայտված արդյունք է ունեցել: Այս հատկության բարձր ցուցանիշների դեպքում անձը քննադատական է, բնութագրվում է ինտելեկտուալ հետաքրքրությունների առկայությամբ, մտածողության վերլուծականությամբ, ձգտում է լավ տեղեկացված լինել: Ավելի հակված է փորձարարականության: Այս հատկությունն է արտահայտված փորձագիտական խմբում և հավաստող գիտափորձի արդյունում փաստում ենք այս հատկության արտահայտման աճը սաների մոտ:

Այժմ նշենք այն հատկությունները, որոնց արտահայտվածությունը խմբում նվազել է: Այստեղ հատկապես հետաքրքրական է անձնային L հատկության փոփոխությունը փորձագիտական խմբի արդյունքների համեմատ, որը տվյալ խմբում բավականին ցածր էր, իսկ ցածր արդյունքների դեպքում անձը

բնութագրվում է համբերատարությամբ, հեշտ է հարմարվում մարդկանց, վստահում է և արդյունավետ աշխատում կոլեկտիվում: Մինչ աշխատանքը հետազոտական խմբում L հատկությունը բավականին բարձր ցուցանիշներ ուներ, իսկ ռեթեստավորման արդյունքում այն նվազել է՝ չհասնելով սակայն փորձագիտական խմբի ցուցանիշներին:

Նշենք, որ ռեթեստավորման արդյունքում մտածողական ոճերի փոփոխություններ չեն դիտարկվում:

Քննարկենք նաև կորելացիոն վերլուծության արդյունքները:

Հետազոտական ամբողջ խմբում ռեթեստավորման արդյունքում ստեղծարարության և անձնային առանձնահատկությունների միջև նշանակալի կորելացիոն կապեր չեն հայտնաբերվում, ինչը սպասելի էր, քանի որ յուրաքանչ-յուր խմբում ստեղծարարության զարգացումը և փոփոխությունը ունեցել է իր յուրահատկությունները: Հետևաբար քննարկենք ենթախմբային մակարդակում կատարված կորելացիոն վերլուծության արդյունքները:

Կրտսեր տարիքային խմբում ստեղծարարության և անձնային F հատկության նշանակալի ուղիղ համեմատական կորելացիոն կապն ավելի է ամրապնդվում (0,963, $n=5$): Նույն խմբում ռեթեստավորման արդյունքներով հաստատվում է հակադարձ համեմատական կորելացիոն կապ ստեղծարարության և անձնային O (-0,909, $n=5$) հատկության միջև: Սա վկայում է, որ այս խմբում ձևավորված համապատասխան մակարդակի ստեղծարարությունն ուղեկցվում է տվյալ հատկության ցածր արդյունքներով, որի դեպքում անձը հանգիստ է, հավասարակշռված:

Ավագ տարիքային խմբում նկատելի է ստեղծարարության և անձնային A հատկության ուղիղ համեմատական կորելացիոն կապը (0,956 $n=5$), իսկ A հատկության բարձր ցուցանիշների դեպքում անձը բաց է, բարեսիրտ և շփվող: Ուշադիր է հարաբերություններում: Մեծ սիրով աշխատում է մարդկանց հետ, ակտիվ է կոնֆլիկտների հաղթահարման գործում, վստահելի է, չի վախենում քննադատությունից, հույզերը վառ են և հագեցած: Ինչպես նկատելի է A հատկությունը, ինչպես և F-ը ըստ Քեթթելի հարցարանի ընդգրկված են միջանձնային կոմունիկատիվ հարաբերություններ բլոկում: Այսպիսով ստեղծարարության զարգացումն ուղեկցվում է անձի բազմակողմանի և զարգացած միջանձնային հաղորդակցական ոլորտի դրսևորմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով տեսական վերլուծությունից և փորձարարական հետազոտության արդյունքների ամփոփումից՝ կատարված են հետևյալ եզրակացությունները.

1. Ստեղծարարությունը ինտեգրալ հոգեկան որակ է, որն իր մեջ միավորում է ինչպես մտածողական, այնպես էլ անձնային համապատասխան առանձնահատկություններ՝ պայմանավորելով մարդու յուրահատուկ, ժամանակի մեջ հարաբերական կայուն մոտեցումը խնդրի լուծման և որոշման ընդունման գործընթացներին:

2. Հավաստող գիտափորձը վկայում է, որ ստեղծարարությունը զարգանում է հետևյալ մեխանիզմով. ավելանում են լուծման որոնմանը միտված քայլերի թիվը, որից հետո ավելանում են լուծման որոնման հնարավոր ուղիները և ապա, դիտարկվում և վերլուծվում են տարբեր այլընտրանքների միջև եղած

կապերը: Այս մեխանիզմի առանձնահատկություններն օրինաչափորեն արտացոլվում են փորձարկվողների կողմից կազմվող մտային քարտեզներում:

3. Ստեղծարարության զարգացումն ուղեկցվում է անձի հաղորդակցական և հուզականային առանձնահատկությունների փոփոխություններով՝ հատկապես խթանելով հուզականային ոլորտի ղեկավարման, շփման դինամիկության, արդյունավետ սոցիալական կապերի հաստատման և մտածողության վերլուծական որակների զարգացումը:

4. Ստեղծարարության զարգացումը, վերափոխումներ կատարելով անձնային առանձնահատկությունների ոլորտում, էականորեն չի անդրադառնում անձի հիմնական մտածողական ռազմավարության՝ մտածողական ոճի, վրա:

5. Ստեղծարարության զարգացումն ունեցել է յուրահատկություններ ուսումնասիրված տարիքային խմբերում. 12-14 տարեկանների մոտ առավելապես անդրադարձել է մտածողության վերլուծականության, իսկ 14-18տ. խմբում՝ հաղորդակցական ոլորտի զարգացման վրա:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հետևյալ հրապարակումներում.

1. **Դ. Ռ. Հայրապետյան - Ստեղծագործության ուսումնասիրման հիմնական ձեռքբերումներն ու թերացումները:** Արդի հոգեբանության տեսական և կիրառական հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2005թ., էջ 51-58
2. **Դ. Ռ. Հայրապետյան - Ուղեղային գրոհը որպես կրեատիվ պոտենցիալի զարգացման տեխնիկա:** Կանթեղ Գիտական հոդվածների ժողովածու 2(27) Երևան, 2006 թ., էջ 209-214
3. **Դ. Ռ. Հայրապետյան - Կրեատիվության ժամանակակից հիմնախնդիրները. անձի ստեղծագործական պոտենցիալ և անհատական հոգեբանական առանձնահատկություններ:** Տեսական, փորձարարական և կիրառական հոգեբանության հիմնահարցերը: Երիտասարդ գիտնականների հոդվածների ժողովածու Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2006թ., էջ 52-63
4. **Դ. Ռ. Հայրապետյան - Մտածողության և որոշում ընդունելու մեխանիզմների փոխակերպումները (պատմության հեռանկարում):** «Պատմություն և կրթություն» գիտատեսական և մեթոդական հանդես թիվ 3-4, Տաթև գիտակրթական համալիր, Երևան 2006թ., էջ 95-101
5. **Դ. Ռ. Հայրապետյան - Մտային քարտեզավորումը որպես անձի մտածողության ընթացքի ուսումնասիրման և ուղղորդման հոգեբանական տեխնիկա:** Կրթությունը և գիտությունը Արցախում թիվ 1-2, Երևան 2006թ., էջ 122-126

Айрапетян Давид Размикович

Закономерности развития креативности и проявления личностных особенностей.

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 “Теория и история психологии”

Защита диссертации состоится 31 мая 2007г. в 14.00 на заседании специализированного Совета 020 по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна по адресу г. Ереван 375010, ул. Тигран Меци, 17.

Резюме

Актуальность темы. Современные исследования креативности проводятся по трем мало связанным между собой направлениям - исследование индивидуальных различий, развитие и формализация процесса принятия решения. Но отсутствует единый системный подход к решению проблем креативности, что предполагает исследование как процесс, продукт и качество. Таким образом, креативность можно сформулировать как интегральное психическое качество, которое формируется на основе мыслительных, интеллектуальных и индивидуальных особенностей личности, проявляющихся в разных сферах жизни и деятельности субъекта.

Научная новизна работы.

1. Систематизированы основные результаты исследований проблемы креативности, что позволяет рассматривать последнее как интегральное психическое качество в процессе развития.

2. В работе развитие креативности рассмотрено в тесном и неразрывном контакте с индивидуальными особенностями и качествами личности.

3. Обоснована и разработана специфическая система исследования креативности, которая служит для диагностики и направления ее развития.

4. Разработана структурная модель развития креативности и создана программа ее исследования, которая уже внедрена в сферу шахматных тренировок и может также продуктивно внедряться в разные сферы психологической деятельности, которая требует креативных подходов.

Теоретическое значение исследования

В единое целое были собраны и систематизированы теории креативности от античных времен до наших дней, что позволило рассмотреть креативность как процесс, продукт и интегральное качество личности,

Практическое значение исследования

Созданная нами система исследования выявила закономерности развития креативности и проявления личностных особенностей, что позволяет использовать последние для развития креативного подхода.

Достоверность результатов: исследование обоснована методологией, изучением теоретических и экспериментальных исследований по проблеме, применением комплекса методик, адекватно поставленным

целям и выборкам исследования. Также внедрением прикладной части исследования в Шахматной академии РА, что обеспечило высокие результаты участников программы по решению проблем и принятию креативных решений.

Структура работы. Диссертация состоит из введения, трех глав, выводов, научно-практических предложений, списка литературы (всего 144 источника) и приложений. В работе 31 рисунок, 8 таблиц, 12 графиков - 8 из которых в виде диаграмм. Объем диссертации составляет 134 страницы.

По теме диссертации опубликовано пять статей.